Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

342(47.925)
U-11

1926

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

01 MAR 2010
05 FEB 2007

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ

(ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

342(47.92)
Ա-11

ԹԻՖԼԻՍ
Հրատարակություն Անդրկենտգործկոմի
1926

342(47.92)
Հ-11

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ

(ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Republican Library
7/XI 1922
Մոսկվա, Մոսկովսկայա
«Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ»

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
ԹԻՖԼԻՍ
1926

37.416
7375

Թիֆլիս, տպարան «Զարյա Վոստոկ»-ի, Ա. Ծուլուկիձեյի փող. № 4. Գլավլիտ № 420. Տիրաժ 1.000. Պատվեր № 1211։

ՎՈՐՈՇՈՒՄ

Խորհուրդների Անդրկովկասյան 3-դ Համագումարի ԱՍՖԽՆ Հիմնական Որենքի (Սահմանադրության) հաստատելու մասին։

Բանվորների, Գյուղացիների, Կարմիր Զինվորների ու Նավաստիների պատգամավորների Խորհուրդների Անդրկովկասյան 3-դ Համագումարը, լսելով ընկ. Շահվերդյանի զեկուցումը ԱՍՖԽՀ Հիմնական Որենքի (Սահմանադրության) այն փոփոխությունների մասին, վոր ընդունված են Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 2-դ Գումարման 2-դ Նստաշրջանի կողմից յեվ յենթակա յեն հաստատման Խորհուրդների Անդրկովկասյան 3-դ Համագումարի կողմից, վորոշում է։

1. Հաստատել Անդրկենտգործկոմի 2-դ Գումարման 2-դ Նստաշրջանի կողմից 1924 թ. սեպտեմբերի 4-ին ընդունած ԱՍՖԽՀ Հիմնական Որենքի (Սահմանադրության) նախագիծը, խմբագրելով՝

ա) սույն նախագծի 6-դ հոդվածը հետեվյալ ձեվով. «ԱՍՖԽՀ տերրիտորիայի վրա բնակվող քաղաքացիների համար սահմանվում է ԱՍՖԽՀ քաղաքացիություն։ ԱՍՖԽՀ քաղաքացիները, ինչպես յեվ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների քաղաքացիները, միաժամանակ միութենական քաղաքացիներ են».

բ) նախագծի 13-դ հոդվածը—հետեվյալ ձեվով. «Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, վորը ունի 210 անդամ յեվ 117 փոխ-անդամ, ընտրվում է Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի կողմից։

գ) 22-դ հոդվածը—հետեվյալ ձեվով՝ «Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընտրում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունն 23 անդամից բաղկացած, վորոնց թվում՝ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների թվի համեմատ, յերեք Նախագահ, մի Քարտուղար յեվ Նախագահության 9 փոխ-անդամ»։

2. Հանձնարարել Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության մշակել առանձին գլուխ, ԱՍՖԽՀ բյուջետային իրավունքների մասին, յեվ ներկայացնել Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 3-դ Գումարման 2-դ Նստաշրջանի հետագա վերջնական հաստատմանը։

Խորհուրդների Անդրկովկասյան 3-դ Համագումարի
Նախագահ՝ **Մ. Ցիակայա։**
Խորհուրդների Անդրկովկասյան 3-դ Համագումարի
Քարտուղար՝ **Ա. Շահվերդյան։**

1925 թ. ապրիլի 14-ին։
Թիֆլիս։

ՎՈՐՈՇՈՒՄ

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի III Գումարման 2-դ Նստաշրջանի։

ԱՍՖԽՀ Սահմանադրությունը բյուջետային իրավունքներին վերաբերող գլխով լրացնելու յեվ ԱՍԽՀ, ՀՍԽՀ յեվ ՎՍԽՀ մեջ գոյություն ունեցող՝ ԱՍՖԽՀ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի Լիազորների Վարչությունները սույն Հանրապետությունների Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատների վերակազմելու մասին։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, լսելով զեկուցումներ՝

ա) ԱՍՖԽՀ Սահմանադրությունը բյուջետային իրավունքներին վերաբերող գլխով լրացնելու մասին յեվ ի նկատի առնելով Բանվորների, Գյուղացիների, Կարմիր Զինվորների յեվ Նավաստիների Պատգամավորների Խորհուրդների Անդրկովկասյան 3-դ Համագումարի հանձնարարությունը ներկայացնելու սույն գլուխը սույն 2-դ Նստաշրջանի վերջնական հաստատմանը յեվ

բ) ԱՍԽՀ, ՀՍԽՀ յեվ ՎՍԽՀ մեջ գոյություն ունեցող՝ ԱՍՖԽՀ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի Լիազորների Վարչությունները սույն Հանրապետությունների Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատների վերակազմելու մասին,

վորոշում է.

1) Հաստատել բյուջետային իրավունքների մասին գլուխը զեկուցած խմբագրությամբ, մուծելով նրան ԱՍՖԽՀ Սահմանադրության մեջ հետյեվյալ ձյեվով.

ԳԼՈՒԽ IX

Հոդ. 54. ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն (ԱՍՖԽՀ յելեվմտացույցը) մտնում է ՍԽՀՄ միասնական պետական բյուջեյի կազմի մեջ։

Հոդ. 55. ԱՍԽՀ, ՎՍԽՀ յեվ ՀՍԽՀ բյուջեները սույն Հանրապետությունների Կենտգործկոմների կողմից հաստատվելուց

հետո, մտնում են իբրեվ բաղկացուցիչ մաս ԱՍՖԽՆ միասնական պետական բյուջեյի մեջ։

Հոդ. 56. ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն հաստատում է Անդրկենտգործկոմը յեվ ՍԽՀՄ Ժողկոմխորհի միջոցով ներկայացնում և ՍԽՀՄ Կենտգործկոմին՝ մտցնելու համար նրա կողմից հաստատվող ՍԽՀՄ միասնական պետական բյուջեյի մեջ։

Հոդ. 57. Անդրկենտգործկոմը համամիութենական բյուջետային որենսդրության սահմաններում վորոշում է ԱՍՖԽՀ յեվ նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների բյուջետային իրավունքները, որենքներ և սահմանում ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն կազմելու, քննելու, հաստատելու յեվ կատարելու մասին, նույնպես սահմանում և բյուջետային որենսդրության բնագավառին վերաբերող այլ նորմաներ։

II. ԱՍՖԽՀ Սահմանադրության IX գլուխը յեվ 54, 55, 56 հոդվածները փոխարինել X գլխով յեվ 58, 59 յեվ 60 հոդվածներով։

III. ԱՍԽ, ՀՍԽ, յեվ ՎՍԽ Հանրապետություններում գոյություն ունեցող՝ ԱՍՖԽՀ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարի Լիազորների Վարչությունները վերակազմել սույն Հանրապետությունների Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատների։

IV. ա) ԱՍՖԽՀ Սահմանադրության 51-դ հոդվածը փոփոխել, ավելացնելով «Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսար» խոսքերից հետո «Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար» խոսքերը. «Լիազորներ» խոսքը փոխարինել «Լիազոր» խոսքով յեվ հանել «յեվ Ֆինանսների Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարիատ» խոսքերը։

բ) ԱՍՖԽՀ Սահմանադրության 52-դ հոդվածը փոփոխել, փոխարինելով «Աշխատանքի, Բանվորա-Գյուղացիական Ժողովրդական Կոմիսարիատներ» խոսքերը «Աշխատանքի, Բանվորա-Գյուղացիական Տեսչության յեվ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատները» խոսքերով։

V. ԱՍՖԽՀ Ժողկոմատների մասին Ընդհանուր Կանոնադրության առաջին հոդվածի «ա» կետը փոփոխել, խմբագրելով հետեվյալ ձեվով. «Համաֆեդերատիվ Ժողովրդական Կոմիսարիատը—միասնական և ամբողջ ԱՍՖԽՀ համար»։

VI. Նույն կանոնադրության 2-դ հոդվածը խմբագրել հետեվյալ ձեվով՝ ԱՍՖԽՀ Համաֆեդերատիվ Ժողովրդական Կոմի-

սարիատն և Ներքին Առեվտրի Ժողովրդական Կոմիսարիատը» յեվ 3-դ հոդվածը խմբագրել այսպես՝ «ԱՍՖԽՀ Միացյալ Ժողովրդական Կոմիսարիատներ են Աշխատանքի, Բանվորա-Գյուղացիական Տեսչության յեվ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատները։»

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ **Մ. Ցխակայա։**

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ **Ա. Շահվերդյան։**

1926 հունվարի 29-ին
Երեվան։

ՎՈՐՈՇՈՒՄ

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության

ԱՍՖԽՀ Հիմնական Որենքի (Սահմանադրության) բնագրի հրապարակման մասին։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը վորոշում է.

Հրապարակել Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Հիմնական Որենքի (Սահմանադրության բնագիրը, վորը ընդունել է 1922 թ. դեկտեմբերի 13-ին Բանվորների, Գյուղացիների, Կարմիր Զինվորների յեվ Նավաստիների Պատգամավորների Խորհուրդների Անդրկովկասյան Առաջին Համագումարը այն փոփոխություններով, վոր 1924 թ. սեպտեմբերի 4-ին մուծել է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի II Գումարման 2-դ Նստաշրջանը յեվ 1925 թ. ապրիլի 14-ին հաստատել է Խորհուրդների Անդրկովկասյան 3-դ Համագումարը յեվ վերջինիս հանձնարարությամբ, 1926 թ. հունվարի 29-ին լրացրել է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի III Գումարման 2-դ Նստաշրջանը։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահը՝ **Ս. Խաչոյան։**

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ **Ա. Շահվերդյան։**

1926 թ. փետրվարի 15-ին
Թիֆլիս—Պալատ։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ)

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Դեկլարացիա Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ստեղծման մասին։

Ռուսաստանի պրոլետարիատի Հոկտեմբերյան հեղափոխությունը, ազատելով աշխատավորներին կապիտալիստների յեվ կալվածատերերի դասակարգային ճնշումից, ազատագրեց նայեվ նախկին ցարական կայսրության ճնշված ազգերը՝ տալով նրանց իրավունք ինքնորոշվելու, նույնիսկ վորպես պետություն անջատվելու։ Անդրկովկասի տիրող դասակարգերը հանձինս իրենց բուրժուական-կալվածատիրական կուսակցությունների, ոգտվեցին այդ իրավունքից իրենց քաղաքական յեվ տնտեսական գերիշխանությունն ամրապնդելու համար յեվ թյուրք-գերմանական իմպերիալիզմի թելադրությամբ սկզբունն անջատեցին Անդրկովկասը բանվորական յեվ գյուղացիական Ռուսաստանից, ստեղծելով Անդրկովկասյան Հանրապետություն, վորի գլուխն եր սեյմը, իսկ հետո յերեք մաս արին միասնական Անդրկովկասը յեվ առանձնացան իրենց ազգային հանրապետություններում։ Ադրբեջանի, Վրաստանի յեվ Հայաստանի բուրժուական-կալվածատիրական իշխող կուսակցությունները Ռուսաստանի հակահեղափոխության յեվ իմպերիալիստական Անտանտի հետ ձեռք ձեռքի տված՝ շարունակեցին իրենց անհաշտ պայքարը Խորհրդային իշխանության դեմ յեվ իրենց յերկրների ժողովուրդներին գլորեցին արյունախանձ կռվի մեջ, գրգռելով միմյանց դեմ յեվ բորբոքելով ազգային ատելություն ու գժտություն։

Անդրկովկասի Հանրապետություններում տեղի ունեցած խորհրդային հեղափոխությունն եր միայն, վոր խորտակելով

հարստահարիչների տիրապետությունը յեվ բանվորների ու գյուղացիների իշխանությունը հաստատելով, Անդրկովկասի ժողովուրդներին խաղաղություն բերեց յեվ հող ստեղծեց յեղբայրական կենակցության յեվ ընդհանուր թշնամու դեմ համերաշխության համար կռիվ մղելու համար։ Այս հողի վրա Անդրկովկասի Հանրապետությունների յեվ նրանց սահմաններում գտնվող ինքնավար շրջանների աշխատավորները իրենց տնտեսությունը վերականգնելու համար միահամուռ յեվ վորոշ ծրագրով աշխատելու յեվ ներքին ու արտաքին թշնամիների դեմ պաշտպանելու նպատակով ստեղծեցին Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը։

Այս միությունը, շարունակելով ազգերի խաղաղության ամրացման յեվ Անդրկովկասի ժողովուրդների մերձեցման գործը յեղբայրական համերաշխության հիման վրա, դրական արդյունքներ տվեց տնտեսական յեվ պետական շինարարության գործում։ Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, վոր Անդրկովկասի Խորհրդային Հանրապետությունները տնտեսական բոյկոտի յեն յենթարկված միջազգային բուրժուազիայի կողմից, այլ յեվ ի նկատի ունենալով իմպերիալիստական տերությունների ներխուժման հնարավորության վտանգը, Անդրկովկասի Հանրապետությունների աշխատավորներն անհրաժեշտ յեվ պատեհ համարեցին իրենց քաղաքականության, տնտեսության յեվ զինվորական ուժերի ավելի յեվս սերտ միությունը։ Այս նպատակով Անդրկովկասի բոլոր Հանրապետությունների լիազոր ներկայացուցիչները, ժողովվելով Խորհուրդների Անդրկովկասյան Առաջին Համագումարում, վորոշեցին ստեղծել Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ԱՍՖԽՀ)։

Անդրկովկասի աշխատավորները՝ բանվորական մասսաների համերաշխության յեվ յեղբայրական միության ավանդությունների ու ծգտումների հավատարիմ, միաժամանակ հանդիսավորապես հայտարարում են ամբողջ աշխատավոր մարդկության առաջ, վոր իրենք միանգամայն պատրաստ են Խորհրդային Հանրապետությունների բոլոր բանվորների յեվ գյուղացիների հետ միասին մի խորհրդային ճակատ ստեղծելու՝ համաշխարհային կապիտալի դեմ միացյալ պայքար մղելու համար։

Այս հիման վրա Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը (Ադերբեջանյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը) միանում են Ռուսական Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության (ՌՍՖԽՀ), Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՈՍԽՀ) յեվ Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ԲՍԽՀ) հետ, կազմելով մի միութենական պետություն—«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն»։

ՀԱՏՎԱԾ ԾԵՐԿՐՈՐԴ

Դաշինք Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն ստեղծելու մասին։

Ադերբեջանյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը յեվ Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը միանում են, կազմելով Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ԱՍՖԽՀ)։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Իշխանության գերագույն մարմինների իրավասության մասին։

1. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆիդերատիվ Խորհրդային Հանրապետության իրավասությանը՝ հանձինս նրա գերագույն մարմինների, այն է՝ Բանվորների, Գյուղացիների, Կարմիր Զինվորների ու Նավատորների Պատգամավորների Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի յեվ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի, վերաբերում են.

ա) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Սահմանադրության հաստատությունը, փոփոխությունն ու լրացումը։

բ) Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմի մեջ Խորհրդային այլ Հանրապետություններ ընդունելն յեվ նրանից նրա առանձին մասերի դուրս գալը թույլատրելը.

գ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տերրիտորիայի վրա ամբողջ ժողովրդական տնտեսության յեվ նրա առանձին ճյուղերի հիմունքն ու ընդհանուր ծրագիրը սահմանելը յեվ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության անունից ՍԽՀ Միության կողմից կնքվող կոնցեսիայի պայմանագրերի նախնական քննությունը.

դ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության միասնական բյուջեյի հաստատությունը.

յե) ՍԽՀՄ միութենական իշխանության թույլտվությամբ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության բյուջեն կազմելու համար լրացուցիչ հարկեր յեվ տուրքեր սահմանելը.

զ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Գերագույն դատարանի կազմակերպությունը.

ե) Հողաշինարարության յեվ հողի ոգտագործման, այլ յեվ հողածոցերի ոգտագործման սկզբունքները սահմանելը Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային ամբողջ Հանրապետության համար։

ը) Վերացումը Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կազմի մեջ մտնող Հանրապետությունների Խորհուրդների Համագումարների, Կենտրոնական Գործադիր Կոմիտեների յեվ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների սույն Սահմանադրությունը խախտող վորոշումների.

թ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տերրիտորիայի վրա ընդհանուր ներման իրավունքը, նույնպես ներման յեվ իրավունքների վերականգման իրավունքը այն քաղաքացիների նկատմամբ, վորոնք դատապարտված են Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության դատական յեվ վարչական մարմինների կողմից.

ժ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության վիճակագրության կազմակերպությունը.

ի) Դատարանակազմության յեվ դատավարության, նույնպես յեվ քաղաքացիական ու քրեական որենսդրության հիմունքները սահմանելը.

լ) ՍԽՀՄ միութենական իշխանության թույլտվությամբ արտաքին յեվ ներքին փոխառություններ կնքելը.

խ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տերրիտորիայի վրա ՍԽՀՄ միութենական իշխանության կողմից սահմանած չափի ու կշռի սիստեմի անցկացնելը.

ծ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տերրիտորիայի վրա ներքին առևտրի ղեկավարությունը։

կ) Աշխատանքի վերաբերյալ որենսդրությունը.

հ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տերրիտորիայի վրա ժողովրդական Լուսավորության բնագավառում ընդհանուր սկզբունքների սահմանելը.

ձ) Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տերրիտորիայի վրա ժողովրդական առողջության պահպանման բնագավառում ընդհանուր միջոցներ սահմանելը.

ղ) ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների մեջ ծագող վիճելի հարցերի լուծումը.

2. Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի իրավասությանն և բացառապես վերաբերում Անդրվովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության Սահմանադրության հիմնական սկզբունքների սահմանելը, լրացնելը յեվ փոփոխելը։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կազմի մեջ մտնող անդրապետությունների գերիշխանական իրավունքների յեվ միութենական բաղադրության մասին

3. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կազմի մեջ մտնող Հանրապետությունների գերիշխանությունը սահմանափակվում է միմիայն այն սահմաններով, որ մատնանշված է ՍԽՀՄ Սահմանադրության յեվ սույն Սահմանադրության մեջ յեվ միայն այն առարկաների նկատմամբ, որ վերաբերում են ՍԽՀՄ յեվ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության իրավասությանը։

Սույն սահմաններից դուրս ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետություններից յուրաքանչյուրը իրագործում է անկախ պետական իր իշխանությունը։

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը պաշտպանում է նրա կազմի մեջ մտնող Հանրապետությունների գերիշխանական իրավունքները։

4. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունները սույն Սահմանադրության, յեվ ՍԽՀՄ Սահմանադրությանը համապատասխան փոփոխություններ են մտցնում իրենց Սահմանադրությունների մեջ։

5. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների տերրիտորիաները չեն կարող փոփոխության յենթարկվել առանց նրանց համաձայնության։

6. ԱՍՖԽՀ տերրիտորիայի վրա բնակվող քաղաքացիների համար սահմանվում է ԱՍՖԽՀ քաղաքացիություն։ ԱՍՖԽՀ քաղաքացիները, ինչպես յեվ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների քաղաքացիները, միաժամանակ միութենական քաղաքացիներ են։

ԳԼՈՒԽ ՅԵՐԲՈՐԴ։

Բանվորների, Գյուղացիների, Կարմիր Զինվորների յեվ Նավատիների Պատգամավորների Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի մասին։

7. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության իշխանության գերագույն մարմինն է Բանվորների, Գյուղացիների, Կարմիր Զինվորների յեվ Նավատիների Պատգամավորների Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարը, իսկ Խորհուրդների մի Համագումարից մինչեվ մյուսը տեվող ժամանակի ընթացքում—Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։

8. Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարը կազմվում է Քաղաքային Խորհուրդների ներկայացուցիչներից՝ հաշվելով 3000 ընտրողին մի պատգամավոր, յեվ Խորհուրդների Գավառական համագումարների ներկայացուցիչներից՝ հաշվելով 15000 բնակչին մի պատգամավոր։

Ծանոթություն.—Յեթե Հանրապետությունների Խորհուրդների Համագումարը տեղի ունենալու լինի Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարից առաջ, վերջինի համար պատվիրակներ կարող են ուղարկել Հանրապետությունների Համագումարները։

9. Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարը հրավիրում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն տարին մի անգամ։

10. Խորհուրդների Անդրկովկասյան Արտակարգ Համագումարը հրավիրում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իր նախաձեռնությամբ կամ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կազմի մեջ մտնող Հանրապետություններից գեթ մեկի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի պահանջմամբ։

11. Արտակարգ հանգամանքներում, որոնք արգելք են հանդիսանում Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի ժամանակին գումարմանը, Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին վերապահվում է իրավունք հետաձգելու Խորհուրդների Համագումարի Գումարումը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի մասին։

12. Խորհուրդների Անդրկովկասյան մի Համագումարից մինչեվ մյուսը տեվող ժամանակի ընթացքում Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության

գերագույն իշխանությունը Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն է։

13. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, որը ունի 210 անդամ յեվ 117 փոխ-անդամ, ընտրվում է Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի կողմից։

14. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն բոլոր ամենայնի պատասխանատու է Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի առաջ։

15. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն գերագույն որենսդիր, տնորինող յեվ վերահսկիչ մարմին է։

16. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընդհանուր ուղղություն է տալիս ԱՍՖԽՀ Բանվորա-Գյուղացիական Կառավարությանը. վորոշում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության յեվ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործունեության շրջանը, միացնում յեվ ներդաշնակում է ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների որենսդրական աշխատանքը։

17. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հրատարակում է դեկրետներ, վորոշումներ, կարգադրություններ. միացնում է Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության վերաբերյալ որենսդրական յեվ կառավարչական աշխատանքը, հսկում է նրա Սահմանադրության, Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի յեվ ԱՍՖԽՀ բոլոր պետական մարմինների վորոշումների իրագործման վրա։

18. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն քննում յեվ հաստատում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության յեվ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների, նույնպես ԱՍՖԽՀ Ժողովրդական կոմիսարիատներին հավասարեցրած այլ մարմինների ներկայացրած դեկրետների, վորոշումների նախագծերն ու այլ յենթադրությունները։

19. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հրատարակած բոլոր դեկրետները, վորոշումները, տնորինությունները պարտադիր են ի կատար ածվելու ԱՍՖԽՀ ամբողջ տերրիտորիայի վրա։

20. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի, նրա Նախագահության յեվ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դեկրետները, վորոշումները յեվ տնորինությունները հրապարակվում է՝ հայոց, վրաց, ռուսաց յեվ թյուրքաց լեզուներով։

21. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իր գործունեության մասին տեղեկագիր յեվ ընդհանուր քաղաքականության յեվ առանձին խնդիրների մասին զեկուցումներ է ներկայացնում Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարին։

22. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընտրում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահություն 23 անդամից բաղկացած, վորոնց թվում՝ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների թվի համեմատ, յերեք Նախագահ, մի Քարտուղար յեվ Նախագահության 9 փոխ-անդամ։

23. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը գումարում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նստաշրջանը տարեկան յերեք անգամ։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Արտակարգ Նստաշրջանները գումարվում են Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վորոշմամբ կամ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամների 1/3 պահանջմամբ, կամ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետություններից մեկի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի պահանջմամբ։

24. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերում բոլոր խնդիրները վճռվում են բաց քվեարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ։ Անվանական քվեարկություն տեղի յե ունենում Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վոչ պակաս քան քսան անդամի գրավոր առաջարկության հիման վրա։

25. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության գործերի ընդհանուր կառավարու-

թյան համար Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կազմում է Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ, այլ յեվ առանձին Ժողովրդական Կոմիսարիատներ յեվ այլ մարմիններ կառավարության առանձին ճյուղերի դեկավարության համար։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն նշանակում յեվ արձակում է ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առանձին անդամներին, ինչպես նայեվ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ամբողջ կազմը, նույնպես նշանակում է ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահին յեվ նրա Տեղակալներին։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության մասին։

26. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի մի Նստաշրջանից մինչեվ մյուսը տեվող ժամանակի ընթացքում Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը ԱՍՖԽՀ իշխանության գերագույն որենադիր, գործադիր յեվ տնորինող մարմին է։

27. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը նշանակում է առանձին Ժողովրդական Կոմիսարներ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առաջադրությամբ։

28. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը հսկում է ԱՍՖԽՀ Սահմանադրության իրագործման յեվ Խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի յեվ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի բոլոր վորոշումների իշխանության բոլոր մարմինների կողմից կատարման վրա։

29. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը հրատարակում է դեկրետներ, վորոշումներ յեվ տնորինություններ, քննում յեվ հաստատում է ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, ԱՍՖԽՀ առանձին գերատեսչությունների, ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետություն-

ների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների, նրանց Նախագահությունների յեվ իշխանություն պետական այլ մարմինների ներկայացրած դեկրետների յեվ վորոշումների նախագծերը։

30. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը քննում է ներման մասին հարուցված միջնորդությունները, հաստատում է Աշխատավորական դրոշի շքանշանով պարգեվատրելը յեվ պարգեվատրում է Կարմիր դրոշի շքանշանով։

31. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը իրավունք ունի կասեցնելու յեվ վերացնելու ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի յեվ առանձին Ժողկոմատների, նույնպես ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների յեվ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումները։

32. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը իրավունք ունի կասեցնելու ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Խորհուրդների Համագումարի վորոշումները, ներկայացնելով հետագայում սույն վորոշումները ի՛ քննություն յեվ ի՛ հաստատություն Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի։

33. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը լուծում է ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի յեվ ԱՍՖԽՀ Ժողկոմատների, մի կողմից, յեվ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների յեվ նրանց Նախագահությունների, մյուս կողմից, փոխհարաբերությունների հարցը։

34. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը պատասխանատու է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի առաջ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ։

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մասին։

35. ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի գործադիր ու

տնորինող մարմինն և յեվ կազմվում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից հետեվյալ կազմով՝ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ, Նախագահի 2 Տեղակալ, Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարը, Ներքին Առեվտրի Ժողովրդական Կոմիսարը, Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարը, Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարը, Անդրկովկասի հակա-հեղափոխության, չարաշահության յեվ պաշտոնի վերաբերյալ հանցանքների դեմ մաքառող Արտակարգ Հանձնաժողովի Նախագահը, նույնպես խորհրդակցական կամ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վորոշումով վճռական ձայնով Արտաքին Գործերի, Ռազմա-Ծովային Գործերի, Արտաքին Առեվտրի, Հաղորդակցության ճանապարհների, Փոստի յեվ Հեռագրի ՍԽՀ Միության ժողովրդական Կոմիսարների Լիազորները։

36. ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից նրան վերապահած իրավունքների սահմաններում յեվ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մասին Կանոնադրության համաձայն հրատարակում և դեկրետներ յեվ վորոշումներ, վորոնց կատարելը պարտադիր է ԱՍՖԽՀ ամբողջ տերրիտորիայի վրա։

37. Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարները Խորհրդին առընթեր կազմվում է Գերագույն Տնտեսական Խորհուրդ, վորպես մի մարմին, վոր ուղղություն է տալիս Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տնտեսական քաղաքականությանը յեվ ղեկավարում է Հանրապետությունների Ժողովրդական Տնտեսության Խորհուրդների յեվ Հանրապետությունների Տնտեսական Խորհուրդների աշխատանքը։

38. ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը քննում է թե ԱՍՖԽՀ առանձին Ժողովրդական Կոմիսարների, թե ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների յեվ նրանց նախագահությունների ներկայացրած դեկրետները ու վորոշումները։

39. ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը իր ամբողջ աշխատանքի համար պատասխանատու է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի յեվ նրա Նախագահության առաջ։

40. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն յեվ նրա Նախագահությունը կարող են կասեցնել յեվ վերացնել ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումները յեվ տնորինությունները։

41. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեները յեվ նրանց Նախագահությունները ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դեկրետների յեվ վորոշումների դեմ բողոք են ներկայացնում Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը, չկասեցնելով նրանց կատարումը։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ։

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Գերագույն դատարանի մասին։

42. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության տերրիտորիայի վրա հեղափոխական որինականություն հաստատելու համար Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին առընթեր կազմվում է ԱՍՖԽՀ Գերագույն Դատարան, վորի իրավասությունն է.

ա) Տալ ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Գերագույն Դատարաններին Ֆեդերատիվ որենսդրության նկատմամբ ղեկավարող պարզաբանություններ։

բ) ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի դատախազի առաջադրությամբ քննել յեվ բողոքարկել Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Գերագույն Դատարանների վորոշումները, վճիռները յեվ դատավճիռները այն դեպքում, յերբ նրանք հակասում են ԱՍՖԽՀ որենսդրություններին յեվ յերբ նրանք շոշափում են մյուս Հանրապետությունների շահերը.

գ) Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի պահանջմամբ յեզրակացություններ տալ ԱՍՖԽՀ Սահմանադրության տեսակետից ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների այս կամ այն վորոշումների մասին։

դ) Լուծել ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների մեջ ծագող դատարանական վեճերը.

յե) Քննել Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի յեվ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամների անձնական յենթակայության, նույնպես յեվ ԱՍՖԽՀ հիմնարկությունների բարձր պաշտոնյաների ըստ մեղադրանքի պաշտոնի վերաբերյալ հանցանքների գործերը.

43. ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանը գործում է հետեվյալ կազմով՝

ա) ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի Պլենար Նիստ.

բ) ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի քաղաքացիական—դատական յեվ քրեական դատական կոլլեգիա.

գ) Զինվորա-Վճռաբեկ Կոլլեգիա։

44. ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանը Պլենար Նիստի կազմը բաղկացած է 9 անդամից, սույն թվում Նախագահը յեվ նրա տեղակալը, ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Գերագույն Դատարանների Պլենար Նիստերի 3 Նախագահը, Անդրկովկասյան Արտակարգ Հանձնաժողովի մի ներկայացուցիչը յեվ յերկու անդամ, վորոնք նախագահում են դատարանական Կոլլեգիայի Նիստերին (մեկը—քաղաքացիական, մյուսը—քրեական) յեվ Զինվորա-Վճռաբեկ Կոլլեգիայի մի Նախագահը։

Նախագահին յեվ նրա տեղակալին, Զինվորա-Վճռաբեկ Կոլլեգիայի Նախագահին յեվ յերկու անդամին նշանակում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը։

45. ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի դատախազին յեվ նրա տեղակալին նշանակում է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը։ ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի դատախազի պարտականություններն են՝ յեզրակացություններ տալ ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի քննությանն յենթակա բոլոր հարցերի վերաբերյալ, ամբաստանել նրա նիստերին, ԱՍՖԽՀ Գերագույն դատարանի Պլենար նիստի վճիռներին անհամաձայն լինելու դեպքում նրանց դեմ բողոք ներկայացնել Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը։

46. ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի քննությանն յենթակա

հարցերին ուղղություն տալու ծեռներեցությունը պատկանում է բացառապես Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին, նրա Նախագահությանը, ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի դատախազին յեվ Անդրկովկասյան Արտակարգ Հանձնաժողովի Նախագահին։

47. ԱՍՖԽՀ Գերագույն Դատարանի Պլենար նիստերը կազմում են դատական հատուկ ատյաններ (կազմեր) քննելու համար՝

ա) բացառիկ նշանակություն ունեցող քաղաքացիական յեվ քրեական գործերը, վորոնք իրենց բովանդակությամբ շոշափում են ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող առնվազն յերկու Հանրապետության շահերը յեվ

բ) Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի յեվ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամների անձնական յենթակայության գործերը։

ԱՍՖԽՀ Գերագույն դատարանի կողմից սույն գործերը իր քննությանն ընդունելը կարող է տեղի ունենալ բացառապես Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կամ նրա Նախագահության վորոշումներով։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության յեվ նրա կազմի մեջ մտնող Հանրապետությունների իշխանության գերագույն մարմինների փոխհարաբերությունների մասին

48. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող յուրաքանչյուր Հանրապետության գերագույն մարմիններն են Հանրապետությունների Խորհուրդների Համագումարները, իսկ մի Համագումարից մինչեվ մյուսը տեվող ժամանակի ընթացքում նրանց Կենտրոնական Գործադիր Կոմիտեները։

49. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեները իրենց միջից ընտրում են Նախագահություններ, վորոնք Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի մի նստաշրջանից մինչեվ մյուսը տեվող ժամանակի ընթացքում տվյալ Հանրապետության իշխանության գերագույն մարմիններն են։

50. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների իշ-

խանության Գերագույն Մարմինների յեվ ԱՍՖԽՀ իշխանության Գերագույն Մարմինների փոխհարաբերությունները վորոշվում են սույն Սահմանադրությամբ։

51. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեները կազմում են տնորինող իրենց մարմինները—Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հետեվյալ կազմով՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ, Նախագահի Տեղակալ, Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի (Ժողտնտգերխորհ) Նախագահ, Հողագործության Ժողովրդական Կոմիսար, Աշխատանքի Ժողովրդական Կոմիսար, Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսար, Արդարադատության Ժողովրդական Կոմիսար, Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսար, Լուսավորության Ժողովրդական Կոմիսար, Առողջապահության Ժողովրդական Կոմիսար, Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսար, Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար, նույնպես յեվ խորհրդակցական կամ համապատասխան Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների Նախագահությունների վորոշմամբ վճռական ձայնով Ներքին Առեվտրի Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարի Լիազորը։

52. Աշխատանքի, Բանվորա-Գյուղացիական Տեսչության յեվ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատները, յենթարկվելով ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին յեվ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդներին, իրենց գործունեության մեջ իրագործում են ԱՍՖԽՀ համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատների ղեկավարող ցուցմունքները։

53. ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների տերրիտորիայի վրա ընդհանուր ներման յեվ իրավունքների վերականգման իրավունքը այն քաղաքացիների նկատմամբ, վոր դատապարտված են ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող Հանրապետությունների դատարանական յեվ վարչական մարմինների կողմից, պատկանում է սույն Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՍՖԽՀ բյուջետային իրավունքները։ մասին։

54. ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն (ԱՍՖԽՀ յելեվմտացույց) մտնում է ՍԽՀՄ միասնական պետական բյուջեյի կազմի մեջ։

55. ԱՍԽՀ, ՎՍԽՀ յեվ ՀՍԽՀ բյուջեները սույն Հանրապետությունների Կենտգործկոմների կողմից հաստատվելուց հետո, մտնում են իբրեվ բաղկացուցիչ մաս ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեյի մեջ։

56. ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն հաստատում է Անդրկենտգործկոմը յեվ ՍԽՀՄ Ժողկոմխորհի միջոցով ներկայացնում է ՍԽՀՄ Կենտգործկոմին՝ մտցնելու համար նրա կողմից հաստատվող ՍԽՀՄ միասնական պետական բյուջեյի մեջ։

57. Անդրկենտգործկոմը համամիութենական բյուջետային որենսդրության սահմաններում վորոշում է ԱՍՖԽՀ յեվ նրա կազմի մեջ մտնող Հանրապետությունների բյուջետային իրավունքները, որենքներ է սահմանում ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն կազմելու, քննելու, հաստատելու յեվ կատարելու մասին, նույնպես սահմանում է բյուջետային որենսդրության բնագավառին վերաբերող այլ նորմաներ։

14663

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության զինանշանի յեվ դրոշի մասին։

58. ԱՍՖԽՀ պետական զինանշանի վերին մասում, լեռնաշղթայի յեվ ծագող արեգակի ընդհանուր տեսարանի վրա, պատկերացած է վոսկե մանգաղ ու մուրճ, խաչաձեվ զետեղված կոթերը դեպի ցած, յեվ նրանցից դեպի վեր հնգաթայը կարմիր աստղ։ Զինանշանի ներքեվի մասում, յեռագագաթ լեռնաշղթայի ստորոտում, պատկերացած է. աջ կողմից նավթահանքի աշտարակներ, ձախ կողմից ծխացող գործարաններ յեվ կենտրոնում խաղողի վորթ, բամբակ, բրինձ, յեգիպտացորեն յեվ ցորենի հասկեր։ Ամբողջ զինանշանը յեզրավորված է կարմիր (ալ) ժապավենով, վորի վրա գրված է վոսկե տառերով, ձախից դեպի

աջ, հայերեն, ռուսերեն, վրացերեն յեվ թուրքերեն լեզուներով «ԱՍՖԽՀ»։

Ստորին մասում, վոր յեզրավորված և ժապավենով, վոսկեգոյն տեղի վրա գրված է՝ «**Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք**» նշանաբանը։

59. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության պետական դրոշը մի կարմիր (ալ) կտավ է, վորի անկյունում կոթին մոտ, վերևում գետեղված է կիսաբոլորշի վոսկետառ «ԱՍՖԽՀ», իսկ սրանից վեր ծախ անկյունում կարմիր հնգաթայր աստղ վոսկեգոյն եզրավորված։

Լայնության յեվ յերկարության հարաբերությունն է 1 : 2։

60. ԱՍՖԽՀ բոլոր կենտրոնական պետական հիմնարկությունների կենտրոնավայրը ընտրվում է Թիֆլիս քաղաքը։

Խորհուրդների Անդրկովկասյան 3-ղ Համագումարի
Նախագահ՝ **Մ. Ֆիրակայա։**

Խորհուրդների Անդրկովկասյան 3-ղ Համագումարի
Քարտուղար՝ **Ա. Շահվերդյան։**

1925 թ. ապրիլի 14-ին։
Թիֆլիս։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ
С.С.Р.А Публичная Б
7/XI 1922
Ереван. Мясники
Ս. ՍՅԱՍՆԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0218037

Պետական գրաց Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության.

34 916